


ԿՈԼԽՈԶՆԱԿԱՆ ՔԻՄԻՉԱՍՈՐ



631.8
4-63

2 .05. 2013

ՔԻՄԻԱՅՄԱՆ ՅԵՎ ԱԳՐՈՀԱՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԴԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ

04 AUG 2

631.8

4-63

mg

ԿՈԼԽՈԶՆԻԿ ՔԻՄԻԳԱՏՈՐ

36086
1000
36086



1935

ԵՐԵՎԱՆ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԻՐԱԶՈՏԸ

Անցյալ տարի ավարագել և չահագործան և հանձնվել կիրականի քիմկոմբինատի կիրազոտի (կոլում-ցիանամիզի) բաժինը՝ կիրազոտն աղոսային պարաբանյութ և, վորը բավարելու յե մեր որ ավուր աճող սոցիալիստական գյուղատնտեսության արդի հսկայսկան պահանջը: ԽՍՀՄ-ի սոցիալիստական դաշտերի բերքատվությունը բարձրացնելու, ահասարակ մեր գյուղատնտեսության արդյունավետությունը մեծացնելու և կոլտնտեսականների համար ունեօր կյանք ստեղծելու գործում հսկայական գեր ունի կատարելու գյուղատնտեսության քիմիացումը, վորի պահանջները լիովին բավարարելու համար կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը վոչ մի չանք և միջոցներ չեն խնայում:

Այս ապացույցներից մեկն ել հենց հանդիսանում և կիրավականի ք/մկոմբինատի կառուցումը, վորի արդյունքը՝ կիրազոտն ուժեղ չափով բարձրացնելու յե Անդրկովկասի սոցիալիստական դաշտերի բերքատվությունը:

Խորհրդային Հայաստանի պարաբանան և ագրոհողագիտական կայանն իր գոյության հենց առաջին տարվանից սկսել և ուսումնասիրել կիրազոտի նշանակությունը, և կայանի կատարած բազմաթիվ փորձերը գալիս են ապացուցելու, վոր կիրազոտն ուժեղ չափով բարձրացնում և մեր յերկրի դաշտային, նախալեռնային լեռնային շրջանների հողերի բերքատվությունը Այսպես, լինամյա բազմաթիվ փորձերը ցույց են տվել, վոր կիրազոտը մեր դաշտային շրջանների բամբակի բերքատվությունն ավելացնում և $20-25\%$ ով, իսկ սուպերֆոսֆատի հետ միասին, միջին հաշվով, $30-35\%$ ով, թեև վորոշ դեպքերում ունենք բերքի նույնիսկ 50% ային հավելում: Պակաս նշանակություն չունի կիրազոտը նաև մեր նախալեռնային հացահատիկային շրջանների համար, ուր այդ պարաբանայութի ազդեցության տակ բերքն ավելանում և $40-60\%$ ով, իսկ սուպերֆոսֆատի հետ միասին տալիս և նույնիսկ $80-90\%$ հավելում, ավելացնելով աշնան և գարնան հացահատիկների բերքը $6-13$ ցենտներ (մի հեկտոմետր)

Նույնը պետք ե ասել նաև լեռնային շրջանների նկատմամբ, ուր կարտոֆիլի և ճակնդեղի բերքն ավելանում է 40—50 %՝ հացանատիկներին՝ 70—90%՝ ովզի, իսկ մարգագետիններինը նույնիսկ մինչև 400%՝ ովզի, այսինքն՝ խոտի բերքը քառապատկում է:

Պակաս դեր չի խաղում կիրագոտը նաև Անդրկովկասի առւալ տրոպիկական կուլտուրաների բերքատվության բարձացման գործում, հատկապես թեյի բերքագության, վորպիսի կուլտուրայի համար կիրագոտն առաջնակարգ ազոտային պարարտանյութերի շարքին և պատկանում:

Ենթե որան ավելացնենք նաև այն, վոր կիրագոտը հրաշալի միջոց և մի շարք մոլախոտերի, ինչպես նաև վոչխարների քափանակ հիվանդության դեմ պայքարելու գործում, ապա հասկանալի կինդի, թե կիրովականի կիրագոտի գործարանը վորքան կարևոր գործոն և սոցիալստական գյուղատնտեսության վերակառուցման և բերքատվության բարձացման գործում:

Գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը մի հզոր լծակ և մեր սոցիալիստական զաւերի բերքագությունն էլ ավելի բարձացնելու գործում:

Կանոնադրության 4-րդ գլխում նախատեսված է կոլտնտեսության դաշերի բերքագության բարձացման բոլոր անհրաժեշտ ազրուենարկումները, վորոնի ամեն մի կոլտնտեսական պետք է լավ իմաստ, տրավետի, այդ աշխատանքների տեխնիկային յեզ յուրացնի նրանց հետ կապված բոլոր մանրամասնությունները:

Մեր «Կոլխոզնիկ-Քիմիզատոր»-ի առանձին համարելում տպական յեն բերքագության բարձացման մասին նոր կանոնադրության մեջ նախատեսված խնդիրների ընդունության հոդվածներ յեզ կոնկրետ ցուցմունքներ:

«Կոլխոզնիկ-Քիմիզատոր»-ի խմբագրությունը խթանում է բոլոր կոլտնտեսականներին, յելելով իրենց փորձից, սակ հիշյալ խնդիրների ընդունության հոդվածներ, վորոնի մեր գրեույի հետագա համարելում կտպավեն:

Նյութերն ուղարկել Յերեվան՝ Արովյան փող. № 123 Քիմիացման յեզ Ազգուղագիտական կայան՝ «Կոլխոզնիկ-Քիմիզատորին»: ԽՄԲ.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒԿՆԵՐՆ ՈԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Բարձր բերք ստանալու գործը պետք ե ապահովել հենց գարնանից: Հողերի ճիշտ պարարտացումը բերքատվությունը բարձրացնելու լավագույն և ամենավտահելի միջոցներից մեկն է. այդ տեսակետից ել գարնանացանի հախաղատրաստական ամենաառաջին աշխատանքներից մեկը տեղական պարարտանյութերի հավաքելն է:

Տեղական պարարտանյութեր են համարվում տնտեսությունների բոլոր տեսակի թափուկները, ինչպիսին են՝ գոմաղբը, մոխիրը, արտաքնօցի, բակի և տնտեսության ուրիշ աղբերը: Այս նյութերը թափված մնալով աղբանցներում և բակերում՝ մի շարք վարակիչ հիվանդությունների տարածման պատճառ են դառնում: Բայց ինչքան վոր աղբերը մեր առողջության վտանգավոր նյութեր են, նույնքան ել բույսերի լավ անեցողության համար անհրաժեշտ նյութեր են պարունակում: Այդ աղբերը մեծ մասմբ գրեի պարարտանյութ են, քանի վոր բույսերի սննդառության համար անհրաժեշտ բոլոր նյութերն ել պարունակում են իրենց մեջ:

Յուրաքանչյուր տնտեսության մեջ աշնանից մինչև հիմա հավաքված կլինի ամենաքիչը մի քանի տոնն աղբ. կլոր հաշվով ամեն մի տոնն աղբն իր նշանակությամբ հավասար է 25 կգ աղոտական, 20 կգ ֆոսֆորական և 25 կգ կալիսական ամենալավ հանգային արհեստական պարարտանյութերի: Բացի դրանից, մեկ տոնն գոմաղբի մեջ գտնվում են 200 կգ որգանական այրվող նյութեր, վորոնք խիստ կարևոր են մեր հողերի մեջ հումուսի քանակն ավելացնելու, հետեարար և հողերի մի շարք հատկությունները լավացնելու համար: Վոչ մի հանգային պարարտանյութ չի կարող հողերի բերքատվությունն այնպես բարձրացնել ինչպես այդ բանն անում են որգանական նյութեր պարունակող գոմաղբը և նման պարարտանյութերը:

Վոր բույսերը և վոր հողերն ամենից առաջ պետք ե պարարտացնել աղբով. պարզ ե, վոր ամենից առաջ ուշագրություն պետք ե գարձնել տեխնիկական բույսերի վրա, ինչպիսիք են մեզ ժոտ՝ բամբակը, ծխախոտը, խաղողը և այլն: Այնուհետև հատուկ

ուշադրություն պետք ե դարձնել բանջարանոցների վրա, վորով-
հետև վերջիններս պահանջում են պարարտ հող: Այն տնտեսու-
թյունները, վորոնք աղբով շատ հարուստ են, վերը հիշած բուշ-
ությունները բավարար չափով պարարտացնելուց հետո պետք ե
պարարտացնեն նաև հացարույսերի և այլ կուլտուրաների հողե-
րը: Կասկած չկա այն մասին, վոր վոչինչ չպետք ե կորցնել և
ամբողջ աղբն ոգտագործել պարարտացման համար:

Հայաստանի բամբակացան շրջանների գրեթե բոլոր հողերը
զոմաղբով պարարտացնելու կարիք են զգում: այդ աշխատանքը
կատարող տնտեսությունները պետք ե զեկավարվեն հետևյալ
կերպ: մեկ հեկտարը լիիվ պարարտացնելու համար պահանջվում
է մոտ 40 տոնն զոմաղբ: Խիստ անհրաժեշտ է, վոր այդքան
աղբը հավասարապես տարածվի մեկ հեկտար հողում: ինչպէս
կատարել այդ, յեթե ընդունենք, վոր աղբ փոխադրով սայլերի
միջին տարագությունը կես տոնն (30 ֆութ) է, ապա մեկ հեկ-
տարի համար հարկավոր կլինի 80 սալլ աղբ: Առաջին սայլի բե-
ռը յեթե թափվի պարարտացվով հողամասի մեկ անկյունում,
ապա յերկրորդը նրանից պետք ե թափել 11 մետր հեռու, յեր-
րորդը յերկրորդից նույնքան, 11 մետր հեռու, և այլն. և յեթե
պահպանի այդ չափը թե հողամասի լայնքի և թե յերկայնքի
ուղղությամբ, ապա ամբողջ 80 սայլ աղբը հավասարապես կը-
տարածվի մեկ հեկտարի վրա:

Յերկրութը գոմաղբը փակու աշխատանքն է. ցանկալի յե-
փոր գոմաղբը հենց սայլերի վեայից փոցիներով տարածվի նրա չորս
կողմը, հինգ մետր շառավիղով, վորպեսի յերկրորդ անգամ աշ-
խատող ձեռքեր չզբաղեցնեն այդ աշխատանքի համար: Բայց վոր-
պեսպի գոմաղբի մեջ գտնվող ամենաարժեքավոր սննդանյութը՝
աղոտն ողը չցնդի, ցանկալի յե, վոր գոմաղբը դաշտում հողի-
յերեսին փոելուց անմիջապես հետո նույն որը վարել հողը:
Փորձերը ցույց են տվել վոր աղբը հողի յերեսին մնալու դեպ-
քում, յեթե որն արեոտ է կամ քամիներ են լինում, 1—2 որվա-
ընթացքում կորչում է գոմաղբի մեջ յեղած աղոտի 25%՝, այն-
ել այնպիսի վիճակում գտնվածը, վորն ամենամատչելին է բույ-
սերի համար:

Տնտեսության մյուս թափթիուկների ոգտագործումը պա-
րարտացման համար նույն յեղանակով պետք ե կատարել, ինչ
վոր ասացինք գոմաղբի մասին:

Ինչ վերաբերում է մոխրին, ապա նրա նկատմամբ պետք

ե լինել ավելի զգուշ: չի կարելի բոլոր հողերին առատ մոխրը
տալ Մոխրի մեջ կան նյութեր, վորոնք շատ հեշտությամբ լուծ-
վում են ջրի մեջ և հողի մեջ շատացնում են լուծվող աղերի քա-
նակը: Յեթե պարարտացման յենթակա հողը բավականին աղեր
ունի և մանավանդ յեթե ջրով այնքան ել ապահովված չե, ապա
պետք ե խուսափել այդպիսի հողերը մոխրով պարարտացնելուց: Մոխրով լավ ե պարարտացնել բանջարանոցները, մարգագետին-
ները, կարտոֆիլը, այգիները, առվույտը և առասարակ ջրով
ապահովված հողերը: Մեկ հեկտարի համար բավական կլինի 5
ցենտներ մոխրի: վերջինս դաշտ տանելու և հողի մեջ խառնելու
տեխնիկան մեծ բանով չի տարբերվում գոմաղբից: Միայն պետք
է խուսափել քամի ժամանակ շաղ տալուց, անհրաժեշտ չե նաև,
վոր մոխրով պարարտացրած հողն անմիջապես վարվի, քանի
վոր սրանում ցնդող նյութեր չկան, բայց լավ ե շատ չուշացնել
վորովհետեւ քամի կարող և հողի յերեսից հեռացնել մոխրի զգա-
լի մասը:

ՅԵՐԱԿԱՆ ՄՈԽՐ

ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐ՝ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԴԱՇՏԵՐԻ ԲԵՐՔԱ- ՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ

«1935 թ. բամբակի կամպանիայի հիմնական խնդիրը մնում
է բամբակի բերքատվության և վորակի հետագա բարձրացումը»—
այսպիս և ասված կուսակցության և կառավարության ս.թ.
հունվարի 22-ի վորոշման մեջ, վորն իրականացնելու համար
մենք ունենք բոլոր հնարավորությունները: Սակայն մինչև
այժմ մենք անհրաժեշտ ուշագրություն չենք դարձել բամբա-
կենու դաշտերի մեկ միավոր տարածությունում թողնվելիք
բռնյաերի վերջնական քանակի վրա, վորի հատեսնքով միշտ ել
մեզ մոտ մեկ հեկտար տարածության վրա բամբակենու քանա-
կը պահանջվածից անհամեմատ ավելի քիչ և յեղել թե այդ
հարցն ինչքան մեծ նշանակություն ունի, յերեսում և փորձա-
դաշտերի տվյալներից և սոորե բերքած հետեւյալ հաշվումներից:
ինչպիսի հայտնի յե, շարքերը և շարքերի վրա բռյուերի (բների)
միջտարածությունները վորոշում են՝ յելնելով հողային, կլիմա-

յական, մեքենայացման և այլ պայմաններից: Այդ տարածություններն ինչպես այս տարվա, այնպես ել անցյալ տարիների ագրոկանոններում ցույց են տրված, որինակ՝

1) միջարքային տարածություն 50 սմ և միջնային տարածություն 20 սմ.
2) » 60 սմ » 20 »
3) » 65 սմ » 20 »

և այլն: Հիշյալ գարիանտներից ընտրում են մեկն ու մեկը՝ յեւնելով կոնկրետ պայմաններից (հողային, սորտային, մեխանիզացիայի և այլն): Համաձայն այդ թվերի, մեկ հեկտարի վրա ստացվում է առաջին դեպքում 200.000 բույս, 2-րդ՝ 166.000 և 3-րդ՝ 153000 բույս (նկատի ունենալով, վոր ամեն մի բնում վերջնականապես թողնվում ու 2 բույս): Այժմ յեթե վերցնենք 2-րդ գարիանտը և մի բույս ընդունենք, վոր հիմանդրությունների, ֆասատուների և այլ անբարեհաջող պայմաններից տարվա ընթացքում վորչացել են 50.000 բույս (ֆասատորեն նորմալ պայմաններում այդպիսի մեծ կորուստ չի լինի), ապա մի հետարի վրա վերջնականապես կմնա 116.000 բույս: Յեկելով բազմամյա ավյաներից՝ պետք ե, վոր այդքան բույս պարունակող տարածությունից (մյուս ազրոնեանարկումները ճիշտ կիրառելով) ստացվի առավագն 14—17 ցենտներ բերք, հաշվի առնելով, վոր մեր պայմաններում բամբակի ամեն մի բույս միջին հաշվով տալիս ե առնվազն 4—5 կնդուզ բամբակ և ամեն մի կնդուզից ստացված բամբակը միջին հաշվով կշռում է մոտ 3,5 գրամ (մենք հաշվումների ժամանակ ընդունել ենք 3 գրամ):

Այս հաշվումները և շրջաններում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, վոր ազրոկանոններով (կամ տեղերում) նախատեսված միջարքային և միջնային տարածությունները կլանենալում յերբեք չեն պահպանված, վորի հետեւնքով միշտ ել մեկ հեկտար տարածությունների բույսեն չեն պահպանված, վորի հետեւնքով մեկ հեկտարի վրա լավագույն դեպքում 60—70.000 բույս ել լինում:

Ահա ազրոնեանարկումների կոմպլիկսի մեջ այս կարեոր ողակի վրա հարկ յեղած ուշադրություն չդարձնելով՝ դրկվում ենք զգալիորեն ավելի բարձր բերք ստանալու հնարավորությունից:

Այդ սխալը կատարվում է սկսած ցանքի նախապատրաստական աշխատանքներից, որինակ.

1. Ինչպես հայտնի յի, մարգերի թմբերի լայնությունը պետք է լինի այնքան, ինչքան նախատեսված և միջարքային տարածությունների համար (մեր որինակում՝ 60 սմ), բայց այդ տարածությունը միշտ ել մարզոցավորները լայն են թողնում, այնինչ պիտի նկատի ունենալ, վոր յեթե միայն թմբերը 60 այնինչ պիտի նկատի ունենալ, վոր յեթե միայն թմբերը 60 ամսնամիետքի փոխարեն 70 սմ լինեն, այլ խոսքով՝ նախատեսվածից 10 սմ ավելի թողնվեն, ապա մեկ հեկտարի վրա իզուր տեղն անողտակործելի կմնա մոտ 500 քառ. մետր, վորի վրա կարող են տեղավորվել մի քանի հազար (7000) բույս:

2. Նույն կորուստը տեղի յի ունենում, յերբ մարգերի լայնությունն ինչպես և միջարքային տարածությունները նախատեսվածից լայն են թողնվում, վորը նույնպես մեր պայմաններում հաճախ է նկատվում:

3. Ի՞շխալ խնդրում շատ մեծ գեր են խաղում նաև բամբակենու նօսրացման ուժագրություն գարձում և, կոլտընտեսություններում այդ աշխատանքը կատարում են հատուկ նշանակված կոլտնեսեականներ և այլն, սակայն փաստն այն է, վոր նոսրացման աշխատանքները բավարար լինելուց գեռ շատ հեռու յեն:

Անցյալ տարի շատ դաշտերում նոսրացումը ծայր աստիճանի անխնամ եր կատարված՝ տեղատեղ բույսերը խիտ եյին թողնված, տեղատեղ ել շատ նոսր (վերջին դեպքը հաճախ եր նկատվում). շատ խիտ թողնված տեղերում բույսերը շատ մանր եյին մնացել և նրանց վրա շատ քիչ կնդուզներ կային, իսկ նոսր մնացած տեղերում անողտակործելի եյին մնացել զգալի տարածություններ, վորի հետեւնքով մեկ հեկտարի վրա բույսերի քանակը նախատեսվածից շատ ավելի պակաս եր:

Նկատի ունենալով, վոր բամբակի դաշտերից բարձր բերք ստանալու գործում շատ մեծ գեր են խաղում վերոհիշխալ խընդիրները՝ այս տարի անհրաժեշտ և մյուս ազրոնեանարկումների հետ միասին նաև հատուկ և լուրջ ուշադրություն դարձնել այս աշխատանքների վրա:

**ՔԻՄԻԱՑԱՆ ՅԵՎ ԱԳՐՈՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԿԱՅԱՆԻ ՓՈՐՁԵՐԻՑ (ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ)**

1934 թ. քիմիացման և աղբոհողագիտական կայանը Հոկտեմբերյան շրջանի կոլտնտեսությունների բամբակի դաշտերում պարագացման մի շաբթ փորձեր կատարեց, վորոնց նպատակներ պարզեց թե ինչպիսի պարարանյութեր և ինչ քանակով պետք է կիրառել՝ բարձր արդյունք ստանալու համար:

Յուրաքանչյուր կոլտնտեսությունում դրված եր 2 փորձ, ամեն մի փորձը 4 կրկնողությամբ. կրկնողությունները բաղկացած են 6-ական հողամասերից, այն եւ:

1. Կոնսուլ (չպարարացված)
2. Աղոտ 90 կիլոգրամ (հեկտարի հաշվով)
3. Ֆուֆոր 90 »
4. Աղոտ 90 կգ + ֆուֆոր 90 կգ
5. Աղոտ 90 » + » 90 + կալիում 60 կլգ.
6. Աղոտ 60 » + » 60 կգ

Փորձերից ստացված արդյունքները (բերքը մեկ հեկտարից ցենտներով):

	Կոնսուլ անունը	Կոնսուլ 90 կգ	Աղոտ 90 կգ	Ֆուֆոր 90 կգ	Աղոտ 90 կգ	Ֆուֆոր 90 կգ	Կալիում 60 կգ	Աղոտ 60 կգ	Եֆուֆոր 90 կգ
1.	Աղոտնորա	14,8	16,6	16,5	18,5	16,9	16,5		
2.	Քյալագյարի	22,6	26,0	23,2	25,6	26,0	26,4		
3.	Չիմուխչի	16,8	22,9	18,3	26,1	—	21,9		
4.	Իզոալու	12,5	15,5	14,8	19,2	—	14,1		
5.	Իզոալու	16,5	21,1	17,7	19,8	—	—		
6.	Չուրի-Արագ	16,0	22,3	19,7	20,7	23,3	—		
7.	Արմթլու	7,7	8,6	9,4	10,1	9,6	10,5		
8.	Ե. Արմագիր	13,2	15,4	14,8	17,6	19,1	—	18,0	
9.	Բամբակաշատ	14,2	16,5	14,9	16,5	—	15,7		

Փորձերի արդյունքներից պարզվում է, վոր Հոկտեմբերյան ըլջանում աղոտի պարարանյութերը հեկտարին 90 կիլոգրամ

աղոտի հաշվով տալիս են շատ լարձր արդյունք (բերքը բարձրացնում են մինչև $35-40^{\circ}/\text{օպլ}$ (ֆուֆորի պարարանյութերը նույնպես տալիս են բարձր արդյունք, սակայն համեմատաբար ավելի քիչ, քան աղոտի պարարանյութերը, իսկ աղոտը և ֆուֆորը միասին տալու դեպքում ամենալավ արդյունքն ե ստացվում: Կալիումի պարարանյութերը համարյա արդյունք չեն տալիս, վորովհետև մեր բամբակացան շրջանների հողերը բավական հարուստ են կալիումով:

Ա. Խրիմյան:

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻՑ ԽԱՐԱԿԻՐԴ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ

Մի շաբթ պարարտանյութեր իրար հետ խառնել չի կարելի, վորոշ պարարտանյութեր ել իրար հետ կարելի յե խառնել միայն դաշտ տանելու նախորյակին: Կան նաև պարարտանյութեր, վորոշ կարելի յե խառնել նախորոք (յերբ ցանկանանք).

Մտորել բերված աղյուսակում ցույց ե արվում, թե վոր պարտանյութերն իրար կարելի յե խառնել և յերբ:

Պարարտանյութի անունը	Ազգութթվական ամսնիում	Ամսնիում սուլֆատ	Լեյսա սելիտրա	Կալց. ցիանամիդ	Ամմոնիում քլորիդ	Միզանյութ
Պարարտանյութի անունը	Ազգութթվական ամսնիում	Ամսնիում սուլֆատ	Լեյսա սելիտրա	Կալց. ցիանամիդ	Ամմոնիում քլորիդ	Միզանյութ
Ամսնիում	●	●	●	●	●	●
Ամսնիում սուլֆատ		●		●		●
Լեյսա սելիտրա		●	●	●	●	●
Կալց. ցիանամիդ	●	●	●	●	●	●
Ամմոնիում քլորիդ	●	●	●	●	●	●
Միզանյութ	●	●	●	●	●	●
Դորժեգիական սելիտրա	●	●	●	●	●	●
Նատրիումական կամ կալիումական սելիտրա		●	●	●	●	●
Սուլփերֆուֆատ	●	●	●	●	●	●
Սիլվինիտ		●	●	●	●	●
Կալիումական աղ 30 և 40%		●	●	●	●	●

Աղյուսակից պետք ե ոգտվել հետեյալ կերպ. յեթե ցանկանում ենք իմանալ թե յերկու պարարտանյութեր իրար կարելի յե խառնել թե վոչ, դրա համար պարարտանյութերի մեկի անունը (մինչույն և վորինը) պետք ե գտնել աղյուսակի վերևի շաբթում, իսկ մյուսինը՝ կողքի շաբթում:

Այդ յերկու պարարտանյութերի համապատասխան շաբթերի հատման տեղում գտնվող վանդակում ցույց ե տրվում, թե կարելի յե խառնուրդ պատրաստել, թե վոչ: Յեթե վանդակում ունի ցջանակ կա (●), ապա այդ պարարտանյութերն իրար խառնել չեն կարելի: Յեթե վանդակի մեջ նշանակված են գծեր (■), կամ չեն կարելի յե խառնել պարարտացնելուց անմիջապես առաջ (ամենաշատը 24 ժամ առաջ), յեթե վանդակն սպիտակ ե (□), ապա այդ պարարտանյութերը միշտ ել կարելի յե խառնել իրար: Ավելի պարզ լինելու համար վերցնենք մի որինակ: Յենթաղքինք ուզում իմանալ կարելի յե ցիանամիդը խառնել սուլփերֆուֆատի հետ, թե վոչ. դրա համար այդ պարարտանյութերից վորեւ մեկը, առենք՝ ցիանամիդը, գտնում ենք կողքի շաբթում, իսկ մյուսը՝ սուլփերֆուֆատը, վերին շաբթում, այդ յերկուսի հատման տեղում վանդակը ուն ե՝ նշանակում ե գրանք իրար հետ խառնել չե կարելի:

Ինչպես պարարտացման աշխատանքների, այնպես ել պարարտանյութերը պահեստաներում պահելու ժամանակ այս կանոնը պետք ե խիստ պահպանել այլապես այն պարարտանյութերը՝ վորոնք իրար խառնել չի կարելի, խառնելու դեպքում կարող են կորցնել իրենց արժեքը:

ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԵՔԵՆԱՅԱՑԱԳՈՒՄԸ

«Կոլխոզնիկ քիմիկատոր»-ի անցյալ համարում մենք խոսեցինք պարարտացման աշխատանքների մեքենայացման անհրաժեշտության և ոդտակարության, վորպես արտադրողականության բարձրացման կարեւոր լծակներից մեկի, մասին:

Այս համարում մեր նպատակն ե լինելու ծանոթացն ել կոլխոզականներին այդ մեքենաների ու նրանցից մեր պայմաններում գործադրվող մի մեքենայի տեխնիկային (նրա գործադրմանը) և պարարտանյութի շաղ տալու մեթոդին:

Ներկայում մեզ մոտ՝ մեր Մ. Տ. կայաններում կերպարկում ե «Վեստֆայլի պրիմա» սիստեմի պարարտացման շաղացան մեքենան:

Այս մեքենայի ընդգրկման լայնությունը 4 մետր ե, սա-

կայն յելնելով մեր տեղական պայմաններից (ձանապարհների և կամուրջների անհարմարություններից) այդպիսին կարճեցված են 2,1 մետրի, վորով և միանգամայն գործադրելի յի մեր պայմաններում:

Այս մեքենայի շաղ տվող ապարատը մի անվերջ շղթա յի հատուկ յելուններով, վորը շարժվում է մեքենայի արկղի հատակի անցքի մոտ: Շղթայի յելունները գուրս են հրում պարարտանյութն արկղի անցքից բաժանող տախտակի վրա: Արկղի անցքը կանոնավարվում է յերկաթյա վահանով, վորի համար մեքենայի յետևի մասում կա հատուկ լծակ, վոր ամրացված է աստիճանացույցով մի աղեղի վրա: Բացի այդ, պարարտանյութի շաղ տալու քանակության փոփոխումը կարելի յի կատարել նաև ատամների թիվը փոփոխելով: Պարարտանյութերի կոշտերը մանրացնելու նպատակով, ամբողջ արկղի յերկարությամբ նրա յետևի պատին շարժվում է մի յերկաթյա տախտակ, վորը կապված է շարժվող անիմուների հետ, վորով և պայմանավորված է նրա շարժումը:

Արկղի հատակը շարժական է, զրա համար իլ հեշտանում է նրա մաքրելը: Ավելի քիչ քանակի պարարտանյութ շաղ տալու համար, մեքենան դրսից ունի բաժտնող սոնակ, վորն իր ցցվածքներով (ատիֆ) ավելի մանրացնում է անցքից թափող պարարտանյութը և նույնիսկ փոշիացնում այն:

Պարարտանյութն ավելի հավասարաչափ շաղ տալու համար մեքենայի ներքեի մասում կան հատուկ ձողիկներ: Վորպեսզի քամին չցրի փոշիացած պարարտանյութը, մեքենայի արկղից մինչև գետնի մոտ այդ ձողիկները ծածկված են հատուկ վահանով:

Մեքենայի մի որփա արտադրողականությունը 7—8 հեկտար է:

Մեքենայի պարարտանյութ շաղ տալու քանակն ստուգում են նախքան աշխատանքն սկսելը, հետեւյալ կերպ: Մեքենան հաստատվում է այնպես, վոր հնարավոր լինի անիմով պտտեցնել կանգնած վիճակում: Մեքենայի տակ փոռում են բրեզնոտ, մեքենայի արկղը լցնում են պարարտանյութ, ապա սկսում են 25 շրջապտույտի սահմանում պտտեցնել անիմով: Բնիկենտի վրա թափված պարարտանյութն զգուշությամբ հավաքում է կշռում են. մեքենայի ընդգրկման լայնությունը 2,1 մետր է, իսկ անիմի շրջապիծը՝ 4,75 մետր: Հետեւապես՝ անիմի մեկ պտույտի գեպքում մեքենան անցնում է պարարտացնում են 2,1 \times 4,75 = 9,98, մոտա-

վորապես 10 քոռ. մետր տարածություն, իսկ 25 պտույտի ժամանակ՝ 250 քմ: Վորպեսզի հող մտցնենք մեկ հեկտարին 800 կգ պարարտանյութ, վորից 300 կգ աղոտական 500 կգ սուպերֆոսիատ, անհրաժեշտ 1 ք. մետրին շաղ տալ 0,08 կգ (80 գրամ), իսկ 250 ք. մետրին՝ 20 կգ: Յեթե մեքենան փորձելիս բրեկենտի վրա թափված պարարտանյութն այդ քանակությունից քիչ ե, ապա անցքը մեծացվում է և նորից կատարվում սուպերֆորման գործողությունը, իսկ յեթե, ընդհակառակն, շատ երաց թողնում մեքենան, անցքը փոքրացնում ենք և այնպիս շարունակում մինչև սուպարվի ցանկացած քանակությունը:

Մեր կողեկտիվ տնտեսությունները գիտակցելով աշխատանքի մեքենայացման կարեոր նշանակությունը՝ պիտք ե լուրջ ուշագրություն գարձնեն նաև պարարտացման այս կարեոր բնագավառի՝ մեքենայացման վրա և այդ նպատակով հատուկ մարդիկ առանձնացնեն, վորոնք լավ ծանոթանալով մեքենային նրա աշխատանքն անխափան գարձնեն ամբողջ պարարտացման սեղոնում:

Կ. Աբրահամյան

ԻՆՉՈՐԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԸ ՄՏՑՆԵԼ ՀՈՂԻ ՄԵՋ

Հողը հանքային նյութերով պարարտացնելու աշխատանքները կատարվում են թե ձեռքով և թե մեքենաներով: Պարարտացման աշխատանքները մեքենայացման յենթարկելն ունի շատ խոշոր առավելություն:

Այժմ քանի վոր մեզ մոտ՝ Խորհրդային Հայաստանում, գաշտերը ձեռքով պարարտացնելը դեսս մասսայական բնույթ և կրում, ուստի այսուել կիսունք այդ ձեի, գլխավորապես հողը համահավասար կերպով պարարտացնելու աշխատանքների մասն:

Պարարտանյութերը ձեռքով շաղ տալու գեպքում հաճախ պարարտացվող գաշտի բոլոր մասերը պարարտանյութ հավասարաչափ չեն ստանում. պատահում ե, վոր գաշտի վորոշ կտորներ մնում են առանց պարարտացվելու, իսկ վորոշ տեղեր ել նախատեսվածից ավելի շատ պարարտանյութ են ստանում, վորը ցանքի մեջ առաջացնում է խայտարեղապություն: Այս գրությու-

Նից խուսափելու համար անհրաժեշտ ե հողամասը նախքան պարաբռացնելը բաժանել համահավասար փոքր մասերի՝ վաճառքակների: Վաճառքակները վորքան փոքր լինեն, պարաբռանյութերն այնքան հաջող և հավասարաչափ կարելի յե տալ հոդին: Վաճառքակների մեծությունը կարելի յե վերցնել 1000 – 100 քառ. մետր սահմաններում, այն հաշվով, զոր պարաբռացվող հողամասը հարմար և հավասար կտորների բաժանվի, և պարաբռանյութն ըստ վանդակների հարմար բաժիններով բաշխվի:

Հողամասը բաժանելով վանդակների՝ այն սահմանագծում
են ցցի սուր ծայրով, իսկ մեծ մասնիկների դեպքում՝ կուլտի-
վատորով կամ բուլլիցով:

Այնուհետև պահեստից դաշտ են տեղափոխում նախորոք պատրաստված պարարտանյութի խառնուրդը։ Պարարտանյութը դաշտ տեղափոխելով բաշխում են ըստ վաճակների, հավասար բաժիններով, սակայն յուրաքանչյուր անգամ դաշտում պարարտանյութը չկշռելու համար պատրաստում են հատուկ չափեր, վորոնցով և պարարտանյութի բաշխումն են կատարում։

Բատ վանդակների պարարտանյութ տալուց անմիջապես հետո, անհրաժեշտ ե ցըլ յուրաքանչյուր վանդակի պարարտանյութն իր տարածության մեջ համահավասար, վորից հետո պետք ե պարարտանյութը խառնել հողի հետ փոցիով կամ գութանով. վերոհիշյալը պարզենք որինակներով:

Յենթադրենք մեկ հեկտարին տրվում է 300 կիլոգրամ՝
ամռնիում սուլֆատ և 428 կգ սուլֆերֆոսֆատ, ընդամենը՝
 $300 + 428 = 728$ կգ.:

Հնդուսենք նաև, վոր հեկտարը (10.000 քառ. մետր) բաժանել ենք 100 վահղակի, ըստ վորում ամեն մի վանդակ կունենա 100 քառ. մետր տարածություն, այս գեպքում ամեն մի վանդակին կհասնի 7,8 կիլոգրամ խառնուրդ (այսինքն՝ մեկ հեկտարին հասանելիք 728 կիլոգրամ պարարտանյութի մեկ հարյուրերորդ մասը): Ամեն մի վանդակին հասանելիք պարարտանյութի քանակը վորոշելուց հետո հատուկ չափով (ամանով) պարարտանյութը բաշխում ենք ըստ վանդակների և հետո յուրաքանչյուր վանդակի պարարտանյութը հավասարաշափ ցրում այդ վանդակի վրա:

Հողամասը վանդակների բաժանելիս կարող ե պատահել,
վոր գաշտի անկյուններում կամ անհարմար մասերում ստացվեն
մեր նախատեսածից (տվյալ գեպօւմ 100 քառ. մետր) պակաս
վանդակներ, որինակ, յեթե մեր հողամասը 15460 քառ. մետր է,

ապա այս 100 ք. մետրանոց վանդակների բաժանելիս կատացվի 154 վանդակ՝ 100 քառ. մետրանոց և 60 քառ. մետր կմնա: Այսպիսի դեպքերում պետք է գտնել 10 քառ. մետր տարածության, հասանելիք պարարտանյութը ($\sigma\tau\beta\eta\eta\alpha\lambda$ ՝ 728: $10,000 \times 10 = 0,728$ կգ), զորից հետո դժվար չե զորոշել ամեն մի վանդակին և մնացած 60 քառ. մետր հողամասին հասանելիք պարարտանյութի քանակը:

Բացի վերոնհայալներից, պարարտանյութերը հավասարաչափ շաղ տալը մեծ շափով կախված է շաղ տիրողից, այդ աշխատանքը կատարողը պետք է փորձված լինի, իմանա պարարտանյութերը հաջող և հավասարաչափ ցըել հողի յերեսը:

Պարսկացումը կանոնավոր, լրիվ, արդյունավետ կատարելու համար, անհրաժեշտ և բարեխիղճ աշխատանք, միաժամանակ հաշվի պիտի առնել յեղանակը, խուսափել անձրես և շատքամուռ յեղանակներից և լայն չափով ոգտագործել բարեխսառն յեղանակները:

Ա. Սիմոնյան

ԿԱՏԱՐԵՆՔ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՊԱՐԶ ՓՈՐՁԵՐ

Մեր բամբակագործական ու ճակնդեղի շրջաններում պարագարտացումքը դարձել է կարեոր ազրոտեխնիկական ձևոնարկումներից մեկը: Այդ շրջանների ամեն մի կոլտնտեսություն իր դաշտերի զգալի մասը պարարտացնում է հանքային նյութերով: Յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է հաշվի առնի, թե իր դաշտերի պարարտացումն ոգուտ տալիս է, թե վոչ: Դրա համար կոլտնտեսություններն իրենց հիմնական սառնաներում պետք է պարզ, հասարակ փորձեր դնեն՝ պարզելու համար պարարտանյութերի ոգտավետությունը տվյալ անտեսության պայմաններում: Այդ փորձերը պետք է դնել ազրոնոմ-ֆիմիզատորի զեկավարությամբ և խրճիթ-լաբորատորիաների շուրջը համախըմբած ակտիվ կոլտնտեսականների միջոցով:

Ներկայումս նման փորձերի համար մեզ մոտ ընդունված են հետեւյալ ձևը, բնտրվում են մեեւ հեկտար միատեսակ հողաման.

վերջինս մոլախոտերով վարակված չպետք ելինի, հողամասը պետք է միատեսակ լինի, վոր ճշշտ չափելով՝ պետք ե բաժանել յերկու հավասար մասի (կես-կես հեկտար) և անկյուններում համապատասխան նշան անել՝ քարերով կամ հատուկ փայտեր տնկելով. հողամասը պետք ե ուղղանկյուն ձև ունենա:

Այսուհետև վարից առաջ այդ բաժիններից մեկը պարագացվում է տպյալ կոլտնտեսության համար ընդունված պարարտանյութերի դոզայով, իսկ մյուս բաժինն ուղղակի հերկվում է և մնում առանց պարարտացնելու: Մնացած աշխատանքները՝ մարգոցելը, ցանելը, ջրելը և ամբողջ հետագա ինամքն այդ յերկու հողակտորների վրա միանգամայն նույնը պետք ե լինի և միաժամանակ կատարված. որինակ, յեթե ապրիլի 20-ին չպարարտացրած կես հեկտարի վրա ցանվում է մի վորոշ սորտի բամբակ, ապա նույն տեսակի բամբակ և նույն որը պետք ե ցանել նաև պարարտացրած հողակտորի վրա:

Պարարտանյութերի ոգտագետության հաշվառման այս պարզ փորձերը պետք ե դաշնան խրճիթ-լաբորատորիաների կարեռ աշխատանքներից մեկը:

Այս փորձերի հետագա աշխատանքների մասին կիսունք մյուս անգամ:

ՊԱՐԱՐՏԱՅՈՒԹԵՐԻ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Ներկայումս արտագրվում են քիմիական պարարտանյութերի բազմաթիվ տեսակներ: Նրանց մեջ կան այնպիսիները, վորոնք արտաքին նշաններով, գլխավորապես գույնով համեմատաբար հեշտ և ճանաչել. Սակայն քիմիական պարարտանյութերի մեծ մասն արտաքին նշաններով հաճախ իրար շատ նման են, հետեւար՝ դժվար ճանաչելի:

Շատ ե պատճեռմ, վոր տնտեսությունների պահետաներում մնացած այս կամ այն պարարտանյութը մնում է անդորձագրելի, վորովհետև հայտնի չե, թե ինչ նյութ ե, կամ թե զործադրելով են ուրիշ պարարտանյութերի փոխարեն: Պատահում են նաև դեպքեր, յերե պարարտանյութերը յերկաթուղային կայարան են հասնում առանց համապատասխան գրության, վոր նույնպես զըժվացնում ե պարարտանյութերի ճանաչելը:

Վորպեսպի սխալ կերպով դաշտ չմացվի վորեւ պարարտանյութ, չխառնվի, մեքենատրակտորային կայանների ագրոքիմլաբորատորիաները պետք ե յուրացնեն նախ և առաջ պարարտանյութերն իրարից ջակելու, նանաչելու լեղանակները:

Այդ վորոշումներն այնքան պարզ են և ճիշտ, վոր շուտով ՄՏԿ-ի լաբորատորիաներն ամեն մի կոլտնտեսության կարող են սովորեցնել այդ գործը (կոլյերիտ դպրոցների աշակերտաների և ակտիվ կոլտնտեսականների միջոցով):

Այժմ նկարագրենք հանքային պարարտանյութերը միմյանցից տարբերելու այն պարզ յեղանակները (պարարտանյութերի վորակական վորոշումը), վոր ընդունված են համարվում այդ նպատակի համար*):

Վորոշելու համար շատ քիչ նյութեր են պահանջվում.

1) փայտի տծուի, 2) կծու տլկալի (կամ թե մոխիր) 3) բացախարբռու, 4) բարիում-ելորդի լուծույթ և 5. ազոտաբրվական արծաթ. նախքան վորոշման յեղանակներին անցնելը, տեսնենք թե ինչ նյութեր են սրանք (աեակտիվներ) և ինչպես պետք ե ոգտվել նրանցից:

Փայտի տծուից ոգտվելը.—Վերցնում են մի կտոր փայտի ածուխ և նրա մի յերեսը շիկացնում (պահելով որինակ, նազթի ամպի կամ ճրագի վրա), փշելով թույլ չեն տալիս, վոր շիկացած ածուխը հանգչի ու այդ ժամանակ դանակի ծայրով մի քիչ պարարտանյութի փոշի յեն ածում ածխի այդ յերեսի վրա, աշխատելով իսկույն զգալ հոտը և առհասարակ հետեւելով, թե ինչ փոփոխություններ տեղի կունենան փորձվող նյութի հետ:

2. Կծու ալկալիի (NaOH, KOH) լուծույթը կարելի յե փոխարինել սովորական մոխրով. վերջինս ել ալկալիի նման գուրս և մղում ամոնիակն այն պարարտանյութերից, վորոնք իրենց մեջ պարունակում են այն: Մոխրից ոգտվում են այդ վորոշման ընթացքում հետեւյալ կերպ՝ մի փորձանոթի մեջ լցնում են փորձվող պարարտանյութի փոշուց մոտավորապես մեկ խորանարդ սանտիմետր, սրա վրա լցնում են նույն քանակությամբ մոխիր. այդ խառնուրդի վրա լցնում են մի քիչ ջուր (ավելի լավ ե տաք) և, յեթե հնարավոր ե, տաքացնում են փորձանոթը (որինակ՝ սպիրտի լապտերի վրա) անմիջապես պետք ե փորչել ըստ փորձանոթից անջատվող գաղերի հոտի, թե ովյալ պարարտանյութն ամունիակ պարունակում ե, թե վոչ:

*). Այս վորոշումները բերում ենք ամբողջությամբ, ըստ Մ. Դ. Բախուլինի աշխատանքների

Յեթե, որինակ, ամոնիակի բնորոշ հոտ և զգացվում, ապօք փորձվող նյութն ամոնիակային պարարտանյութերի խմբին եւ պատկանում: Ամոնիակի ներկայությունը կարելի յէ հաստատել և լակմուսի կարսիր թղթով, վորոն այդ գեպքում կապտում եւ:

3. Քացախարքու (կամ քաջախ).—Յեթե քիմիական լաբորատորիաներում գործածվող քացախաթթու չկա, ոգտագործում են քացախի եւնցիս՝ նրա մեկին տառը մաքուր ջուր խանելով: Յեթե այդ ել չկա, կարելի յէ ոգտվել սովորական մաքուր քացախով:

4. Բարիում-էլորիդի լուծույքը (BaCl_2) գործածելու ձեվք.—Բարիում-քլորիդը հաճախ գործ եւ ածվում մասսատուների դեմ, ուստի ագրոկայաններում հաճախ լինում եւ (կարելի յէ գնել նաև դեղատներից). պատրաստում են 3—5% անի լուծույթ:

Փորձվող պարարտանյութից մի քիչ լցնում են մի վորեւ անոթի մեջ (որինակ՝ բաժակի), ավելացնում են ջուր ու մի լավ խառնում: Այնուհետեւ թողնում են, վոր պղտորությունը նստի, վորից հետո յերեսի մաքուր լուծույթից մի քիչ լցնում են մի փորձանոթի մեջ և կաթիլ-կաթի լավելացնում բարիում-էլորիդի լուծույքից, յեթե ամեն մի կաթիլից նկատելի նստվածք եւ առաջանում, ապա շարունակում են կաթեցնել, մինչև չհամոզվեն, վոր առատ նստվածք կա:

5. ազոտաբբիլային արծաք կամ լյալիս (AgNO_3).—Սա կարելի յէ մեռք բերել դեղատներից և բժշկակայաններից, պետք եւ պատրաստել 2—5% լուծույթ և գործադրել այնպես, ինչպես բարիում-քլորիդի լուծույթը:

6. Սովորական մահուր զուրը ևս կարող եւ ոգտակար լինել պարարտանյութերի վորակը վորոշելիս: Փորձանոթի մեջ մի քիչ պարարտանյութ լցնելով և նրանից մի 20 անգամ ավելի՝ ջուր, հնարավոր եւ պարզել, թե տվյալ պարարտանյութը ջրում լուծվի՞ւմ եւ, թէ անլուծելի յէ:

Ինանալով այսքանը՝ կարող ենք արդեն իրարից տարբերել պարարտանյութերը:

Ինչպես վորոշել ազոտական պարարտանյութերը. —ա. Ամոնիում-սուլֆատ, կամ ծծմբաքային ամոնիում ($(\text{NH}_4)_2\text{SO}_4$).—Սա բաց մոխրագույն (սպիտակավուն), մանր, բյուրեղի պես մի աղ եւ Յերեմին բյուրեղիները կորցրած են լինում իրենց ձևը, և նյութը ներկայացնում եւ սպիտակ մանր փոշի: Յեթե զգուշ կերպով այդ նյութի համը տեսնելու լինենք, կզանք խիստ կծու աղի համ:

Դնման նյութերի համը տեսնելիս պետքի, նախ շատ քիչ քանակության վեցներ և ապա, համն զգալուց հետո, վողողել բերանը ջրով): Խոնավ տեղում պահելուց մասամբ կոշտեր եւ կազմում, վորոնք սեղմելուց նորից փշրվում են:

Ուսակտիվների ազդեցույթունը,—1. Զրում հեշտ լուծվում եւ, 2. ալկալիների (կամ մոխրի) ազդեցությամբ անջատում եւ ամոնիակը (NH_3). Վորը հեշտ ճանաչվում ել սուր հոմի շնորհիվ. 3. յեթե ամոնիում-սուլֆատի լուծույթին ափելացնենք բարիում քլորիդի լուծույթ, ապա մասն բյուրեղային նատվածք եւ առաջանում, վորը քացախաթթվի մեջ չի լուծվում. 4. շիկացած ածխի վրա մի քիչ մուգ գույն եւ ընդունում, արձակում եւ ամոնիակի հոտ և հազիվ նկատելի ծուխ:

5. Նատրոնական կամ Զիլիտկան (սելիտրա) NaNO_3 .—Սա խոր ազացած աղի նման, բյուրեղային մի անգույն նյութ եւ (Զիլիտը ազացած աղի բանական յերեմն մի քիչ վարդագույն եւ լինում: Նա դառը և աղի, պաղեցնող համ ունի: Զիլիտկան կամ նատրոնական սելիտրան հիգրոսկոպիկ եւ, այսինքն ջուր կանելու ընդունակ եւ նա ընդունակ եւ պահելու ընթացքում (անբարենպատ պայմաններում) յերեմն կոշտեր կազմել:

Ուսակտիվների ազդեցույթունը,—1. Զրի մեջ լուծվում եւ շատ հեշտ (O° -ի գեղքում 100 գրամ ջուրը լուծում եւ 73 գրամ սելիտրա, իսկ 100 աստիճանի գեղքում 175 գրամ).
2. ալկալիի լուծույթի (կամ մոխրի) հետ փոխազդեցության մեջ չի մտնում (գոչ մի նոր նշան չի ցույց տալիս).

3. բարիում-քլորիդի ազդեցությամբ սելիտրայի լուծույթը տալիս եւ պղտորություն, վորը չի լուծվում քացախաթթվի մեջ.

4. շիկացրած ածխի վրա փոքրիկ բռնկումներ եւ առաջնում, ու փշրական ցատկանում են:

5. Նորվեգիական սելիտրա կամ կալցիում նիտրատ $\text{Ca}(\text{NO}_3)_2 \cdot \text{H}_2\text{O}$.—Բաց մոխրագույն կամ սպիտակ, մանր բյուրեղական նյութ եւ Չափազանց ուժեղ կերպով արտահայտված հիգրոսկոպիկ հատկության հետեւանքով սովորական ողային պայմաններում լինում շատ ջուր և կանում. ըստ Բասսետի սովորական պայմաններում այս աղը չուր մաս ջուր եւ պարունակում: Մանր բյուրեղային աղ եւ սուր ջուր կանելով՝ նա թաց աղի տեսք եւ ստանում («լաց և լինում») և շատ ամուր ու գժվար փշրվող կուտրեր եւ կաղմում: Պաղեցնող և կծու աղի համ ունի:

Ուսակտիվների ազդեցույթունը,—1. Զրի մեջ լուծվում եւ շատ

հեղտ (100 գրամ ջուրը Օ աստիճանի տակ կարողանում է իր մեջ լուծել 93,1 գրամ կալցիում նիտրատ, իսկ 152 աստիճանի տակ՝ վոր նրա հազեցած լուծույթի յեռման կետն ե՝ 351,2 գրամ)։

2. ալկալիական լուծույթի ազդեցությամբ չի փոփոխվում.
3. բարիումքլորիդից նստվածք կամ պղտորություն չի առաջնում.

4. Հիկացած ածխի վրա հալվում ե, յեռում, այրվում՝ թռղ-
նելով ածխի վրա կրային սպիտակ մնացորդ:

գ. Ազոտաբրիվական ամնիում, կամ ամոնիում՝ նիտրատ (NH_4NO_3)—Մանր բյուրեղային սպիտակ աղ ե, յերբեմն՝ բաց գեղնավուն գույնի, խիստ հիգրոսկոպիկ ե, շատ ջուր կլանելու ընթ գունակ, պինդ կողտեր ե կազմում, վորոնց մանրացնելը գծվառությունների հետ ե կապված, Անդգուշ պահելու (որինակ՝ որդանական նյութի հետ խառնվելիս) կամ կրակի առկայության դեպքում կարող ե պայթյուն առաջացնել:

Զրի հետ լուծելիս ջերմություն և կլանում, ուստի համը տեսնելիս պաղեցնում և լիզուն:

Վորպեսպի շատ ջուր չկանի և կոշտեր չկազմի, յիրբեմն ազտաթթվային ամոնիումը գործարանային ճանապարհով գրանուլացիայի յեն յենթարկում (հատուկ ձևով պատրաստում):

Աեակիվների ազգեցությունը.—1. Հրում լուծվում է.

2. ալղալիթ ազգելուց՝ անջատվում և ամոնիակ գաղը՝ բնորոշություն արձակելով.

3. շիկացարծ ածխի վրա նույնպես ամռնիակ և անջատում՝ հոքը բռնկութիւններ և առաջացնում ու այրվում և սպիտակ ու վառ սպոփ:

4. բարիումքլորիդից չի փռխվում:

Ե. Լեյնասելիքրա, կիամ ամոնիումի սուլֆատ-նիտրատը (NH_4)₂ $-$ $\text{SO}_4 \cdot 2\text{NH}_4\text{NO}_3$) .— Ազոտաթթվային ամոնիումի բացասական հատկությունները (շատ ջուր կլանելը, կոշտեր կաղմելը, պայթելը) մի քիչ պակասեցնելու նպատակով նրան խառնում են մոտավորապես իրեն հավասար քանակությամբ ամոնիում-սուլֆատ։ Ազոտաթթվական ամոնիումի և ամոնիում սուլֆատի այդ խառնուրդից առաջանում է մի կրկնակի աղ, վորը սովորաբար «լեյնասելիքրա» յեն անվանում։ Լեյնասելիքրայի մեջ ազոտի¹ կամ գանգում են վօրպես նիտրատ (NO_3)³ կամ վօրպես ամոնիակ (NH_3):

կենա սելիտրան թաց-մոխրագույն, մանր բյուրեղային աղանման նյութ է: Հիգրոսկոպիկ և կոշտեր կազմելու ընդունակ:

Պայթելու ընդունակությունն այստեղ շատ ավելի թույլ է
առանձ առաջած քան ազդաբարձրվային ամոնիումի գեպում:

Հայության մասին և անլուծելի պահանջությունների մասին

3. բարիումքլրիդ՝ ազդեցության մեջ՝

զ. ամսնիում կրակի կամ, այսպես կոչված սաշակը (ՏԻՒՅ. մասը բյութեղային սպիտակ կամ մի քիչ գորշավուն աղ ե: Հիգ- րոսկոպիկ հատկությունը համեմատաբար թույլ է արտահայտված:

Ուսակտիվների ազդեցությունը.—I. Հրան լուսակ

2. ալկալիֆական լուծույթի (կամ սոլիլի) և անօդական գանձատումները ամուսնական վահանակության համար պահանջանառ են:

3. բարիումքը ըլլիդով աղղելիս լուծույթը առնես և դրա համար առաջնում է

4. ազոտաթթվային արձաթի ազդեցությամբ առաջանած քանակությամբ սպիտակ նստվածք, փորձանութը թափահան է գործությամբ:

հարելուց նստվածքը շաղված կաթի ձև և ստանում:

է. կալցիում զիտանամիդ կամ կրազոս.—Մուգ մոխրագոյն
սևավուն թափանման, բարակ ու փափուկ փոշի յե: Վորովհետեւ
ցիանամիզը գործածելիս շատ փոշի յե բարձրացնում, այդ յերե-
փույթի առաջն առնելու համար յերբեմն նրան գործարանում հան-
քային պարարատանյութ են խառնում (մոտ 2 տոկոս). այդպիսի
կրազուր սովորաբար, ճանաչվում են նավթի թույլ հոտով: Սո-
կրազուր սովորաբար, ճանաչվում են, զոր կրազուր հիգրոսկոպիկ չե, քանի փոր
փորաբար գտնում են, զոր կրազուր հիգրոսկոպիկ չե, քանի փոր
նա նկատելի չափով չե խոնավանում: Սակայն կրազուր հիգ-
րոսկոպիկ հատկություններն արտահայտված են մի քիչ այլ կերպ,
որուկոպիկ հատկություններն արտահայտված են մի քիչ այլ կերպ,
նա ողիք կլանում ե ջուր և ածխաթթու գազ ու ինքը կրում ե
քիմիական փոփոխություններ: Արդյունքը ինում ե այն, զոր
կրազուր քաշն ավելանում ե ի հաշիվ ողիք խոնավության և ած-
խաթթվի գազի, հեակարար նրա միջի ազուրի տոկոսն իջնում ե
է երազուր կոշտեր չե կազմում:

Հազ, չոր պահելու դեպքում կրազոտը զոշտով չ' կազմուի
Խոնավ և վատ պայմաններում յերկար պահած կրազոտի մեջ ա-
մուր կոշտեր են կազմվում, փորոնց մասի ացնելը շատ մեծ դժ-
գարությունների հետ և կառվածք

կծու աղի համ ունի, սակայն կրագոտի համը տեսնելը խորհուրդ չի տրվում:

Անեսէսվիմերի ազդեցուքյունը.—1. Ջրի մեջ սկասելի կերպով չէ լուծվում.

2. ալիւթի - ազդեցության տակ արձակում և ամռնիակի հոտ.
3. մյուս սեակտիվներից չի փոփոխվում:

Սիրացնուք (կարբածիլ). — Մանր բյուրեղային սպիտակ փոշի
յի, անհամ, բայց պաղեցնող:

Ա-խակիների ազգիցուքյունը.—1. ջրի մեջ ամբողջովին լուծվում է.

2. ալկալիի ազգեցության տակ ամռնիքակի հոտ չի արձակում, այդ հոտն զարգվում է միայն յեռագման ժամանակ:

3. բարիուումքլութեղի ազգեցության տակ նստվածք չի առաջանաւ, սակայն թույլ կերպով պատորվում է տաձաւում:

4. ածխի վրա շիկացնելիս արձակում և ամռնիսկի բնուը հոտ, այնուհետեւ հարթում և ու փոշնանում:

四百一

ԻՆՉ Ե ԱԶՈՏԸ

Աղոստի միացությունները շատ մեծ կիրառում ունեն գյուղատնտեսության մեջ և հայտնի յեն վարպետներ արժեքավոր պարագաներութիւն:

Հայաստանի համարյա բոլոր Հողերն աղոտի պարաբռացման կարիք են զգում, վորի համար և մեզ մոտ, ինչպես և ընդհանուրապես, նրա կիրառումը հետզհետեւ ավելի մեծ չափերի յե հասնում: Ահա այս տեսակետից արժեք այդ նյութի հետ ծանոթանալ ավելի մոտիկից:

Ազոտն անգույն, անհօտ և անհամ գազ է. բնության մեջ գտնվում է աղատ գրւթյամբ և այնպիսի միացությունների ձևով, վորոնք շատ մեծ նշանակություն ունեն մարդկանց, կենանիների և բուսականության կյանքի համար:

Ազոտը կաղմում ե սպիտակուցային նյութերի հիմնական բաղադրիչ մասը, առանց վորի՝ կյանքը գոյություն ունենալ չի կարող, վորովհետև թե կենդանիները և թե բուսական բջիջները հիմնականում կաղմված են սպիտակուցային նյութերից:

Բացի այս, ազուրը հայտնի յե նաև բազմաթիվ անորգանական միացությունների ձևով, ինչպիսիք են՝ ամոնյակալին, ազուրական միացությունների ձևով, ինչպիսիք են՝ ամոնյակալին, ազուրական միացությունների ձևով, այլն, վորոնք այս կամ այն չափով առական թթվի աղերը և այլն, վորոնք այս կամ այն չափով գոտնվում են հողում և հաճախ հանդես են գալիս հանքերի ձևություններում (Զիլիական հանքերը). այս միացությունների շարքին են վուր (Զիլիական հանքերը). այս ապոտային արհեստական պարարտանյութերը: պատկանում նաև ապոտային արհեստական պարարտանյութերը:

ինչպես ասացինք, թե բույսերը և թե զարդարել է լուսական գոյություն ունենալ չեն կարող, բայց վարովհետեւ սպիտակուցի գոյություն ունենալ չեն կարող, բայց վարովհետեւ բույսերն իրենք են պատրաստում իրենց այնքան անհրաժեշտ սպիտակուցային նյութերը, իսկ դրա համար անհրաժեշտ ե ազոտ, ուստի և բույսերն առանց ազոտի գոյություն ունենալ և անել չեն կարող: Թեպետ մեր յերկրագունդը շրջապատող մթնոլորտի մոտ $78^{\circ}/_{\circ}$ -ը (ըստ ծավալի) բաղկացած ե ազոտից, սակայն բույսերն ընդունակ չեն այդ ազոտի հսկայական պաշարն ոգտագործելու: Նրանք յուրացնում են այն ազոտը, յերբ նա միացած ելինում ուրիշ քիմիական տարրերի հետ հանքային միացությունների ձևով: Ահա դրա համար ե, վոր մարդիկ զանազան ձևերով ողի ազատ ազոտի առատ պաշարը վեր են ածում բույսին մատողի շաբաթ աղոտային միացությունների, վորոնք հայտնի յեն վորպես ազոտային պարարտանյութեր և վորոնցով հողը պարագացնելիս ապահովում ենք բույսին անհրաժեշտ ազոտային սննդանյութի քանակը և դրանով իսկ հսկայական չափերով բարձրացնում ըերբաւավորթյունը:

7. Այենանիան

ԱԶՈՏՈՒՄԱԿՏԵՐԸ ՅԵՎ ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ասցյալ համարում արգեն գրգել ե այս մասին, վոր հողում
ապրում են հսկայական քանակությամբ հասարակ աշխատ ան-
տեսանելի երակներ՝ միկրոռգանիզմներ, վորոնք իրենց գոր-
ծունեյությամբ մեծ ոգուտ կամ ֆսաս են հասցնում մեր տնտե-
սությանը: Այդ մանր որգանիզմներն ուսումնափող զիտու-
սությանը—միկրոբիոլոգիան, այժմ այնքան ե զարգացել, վոր կա-
թյունը—միկրոբիոլոգիան, այժմ այնքան ե զարգացել, վոր կա-
թյունը ե այս կամ այն միջոցառությունը հողում կատարվող միկ-
րոբիոլոգիական ցանկալի պրոցեսներն ուժեղացնել և, ընդհակա-
ռակն, ֆսասակար պրոցեսները դանդաղեցնել:

Հողում տեղի ունեցող ոգտակար միկրոբիոլոգիական ամենակարևոր պրոցեսներից մեկը մթնոլորտի ազոտը կապված գրության վերածելն է: Ի՞նչպես և այդ կատարվում: Հողում ապրում են մի խումբ միկրոօրգանիզմներ՝ «ազոտ կապողներ» վորոնք, հակառակ բոլոր մնացած բույսերի ու կենդանիների, սնվելու ու զարգանալու համար ոգտագործում են ողի ազտ գազանման ազոտը Ազոտը, ինչպես գիտենք, կազմում է մթնոլորտի մոտ 78%՝, վորն այդպիսի գազային դրությամբ չի ոգտագործվում վոչ կենդանիների, և վոչ եւ բույսերի կողմից, չնայած նրան, վոր ազոտն որգանական աշխարի ամենակարենարժ բաղադրիչ մասն է, և վոր առանց ազոտի կյանքը գոյություն ունենալ չի կարող: Ազոտ կապողներն ապրում են հողում և իրենց կյանքի համար բարենպաստ պայմաններում տարվա ընթացքում մեկ հեկտար տարածության վրա կապում են 30—50 կգ ազոտ և դրանով հարստացնում հողը բույսերի սննդառության համար ամենակարենոր նյութերից մեկով ազոտով:

Մեր ուսումնասիրություններն արդեն պարզել են, վոր Հայաստանի համարյա բոլոր հողերում ազոտ կապողները բավականին տարածված են, բայց նրանց ազոտ կապելու կարուղությունը տարբեր շրջանին հողերում տարբեր է: Դաշտավայրերի հողերում ազոտ կապողների քանակը մեկ գրամ հողում հասնում է 40 մելիխոնի, վորոնք մեծ ակտիվությամբ յուրացնում են ազոտը: Այս հանգամանքը պետք է ոպտագործել՝ ազրուելինիկական զանազան ձեռնարկումներով ավելի բարձրացնելու ազոտ կազմողների ընդունակությունը:

Այն շրջաններում, վորտեղ այդ որդանիզմները քիչ են տարածված և ակտիվ չեն, պետք է միջոցներ մտածել այդպիսի հողերի փիզիկո-քիմիական գրությունը լավացնելու և աղբուկանոնների մեջ մտնող այլ ձեռնարկությներով շատացնելու աղոտ կապողների թիվը, բարձրացնել նրանց գործունեյության կարողությունը:

Մեր Միության սահմաններում և այլ յերկրներում կան հողեր, փորոնք չեն պարունակում ազոտ կապողներ. Ներկայումս միջոցներ են ձեռարկվում՝ այդ հողերի փիզիկո-քիմիական կազմը և գրությունը փոփոխության յենթարկելով հարմարեցնել ազոտ կապողների զարգացման, և ապա նման հողերը, վորտեղ նպաստավոր պայմաններ կան, բավական ե մեկ անգամ հիշյալ բակ-

տերիաներով վարակել, վորպեսզի նրանք այդտեղ պարգևանան և կապեն ողի աղոթը:

Նկատի ունենալով, վոր ազոտ կապողները կարող են սպազմակարգ հողին տարեկան 30—50 կգ ազոտ տալ, պետք է ամեն միջոց ձեռք առնել նրանց այդ կարողությունը լրիվ ոգտագործելու և դրանով նպաստելու մեր սոցիալիստական դաշտերի բերքի բարձրացման:

Մյուս համարում կիսունք ազոտ կապողների համար և
զում լավ պայմաններ ստեղծելու նպատկով կիրառելիք ազըն-
ձեռնարկութերի մասին:

Ա. Պետրոսի

ԻՆՉ Ե ՆԻՏՐԱԳԻՆԸ

«Կոլտնտեսական քիմիզատոր»-ի առաջին համարում խոսվեց յերկրագործության համար թիթեռնածաղկավոր բույսերի ունեցած հսկայական նշանակության և նրանց արմատների վրա գտնվող պայմանաբակտերիաների գերի մասին:

Այդ խնդիրների հետ կապված ուսումնասրբությունները առ փորձերը ցույց են տվել վոր յեթե հողը պալարաբակտերիաներից զուրկ ե կամ աղքատ, ապա այդտեղ մշակվող թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող բույսերի արմատների վրա պալարներ չեն առաջանաւմ և նրանց բերքը շատ քիչ ե լինում, մանավանդ, յերբ հողը սննդանյութերից աղքատ է: Այս դեպքում, բացի նրանից, վոր հիշյալ բույսերի բերքը քիչ ե լինում, նրանք նաև հողն աղքատացնում են սննդանյութերից, այսինչ նորմալ պայմաններում, յերբ այդ բույսերի արմատների վրա զարգանում են պալարաբակտերիաներ, նրանք թե բարձր բերք տանեաւ, և թե հողն աղոտով հարստացնում են:

վերջին մի քանի տարիների փորձերը ցույց տվին, վոր-
յեթե պալարաբակտերիաներով աղքատ կամ բոլորովին զուրկ հո-
գերը հարստացվում են այդ բակտերիաներով, ապա այդտեղ ցան-
վող թիթեանածաղկավորների ընտանիքին պատկանող բույսերը
արմատների գրա առատորեն զարգանում են բակտերիաները,
վորի շնորհիվ թե բույսերը նորմալ աճում են և թե հողն ուժե-
ղանում է: Ահա այս պատճառով վելչես մի շաբաթ յերկրներում

սկսեցին պատրաստել հիշյալ ընտանիքին պատկանող բույսերի արմատների վրա զարդացող և պալարիկներ առաջացնող բակտերիալ պարարտանյութեր, վորը և կոչվում ե նիտրագին. Այժմ խորհրդային Միության կենտրոնական քաղաքներում, ինչպէս նաև մեղ մոտ՝ պարարտացման և ագրո-հողագիտության դիտահետազոտական կայանում պատրաստում են այդ պարարտանյութը՝ նիտրագինը: Նիտրագինը պահվում է թիթեղյա փոքրիկ տուփերով: Այդ տուփերի մեջ պահվում ե պալարարակտերիաներով վարակված 0,5—1 կիլոգրամ հող, վորով կարելի յե պարարտացնել մեկ հեկտար հողամաս: Պարարտացման աշխատանքը կատարելու համար պետք ե այդ տուփի մեջ գտնվող հողը (նիտրագինը) խառնել ջրի, կամ կաթի հետ (կաթը պետք ե լինի յեռացրած և հետո սառեցրած ու յերեսը քաշած). այդ խառնուրդը պետք ե թողնել 24 ժամ և ապա սերմերը թրջել նրա մեջ (որինակ՝ առվույտ, վիկ և այլն) ու ցանել: Այս ձեռվ սերմացուն նախ քան ցանելը վարակում ենք մեր ցանկացած բակտերիաներով, վորի հետվանքով այդ սերմերը յերբ հողում ծլում են, նրանց արմատների վրա զարդանում են հիշյալ բակտերիաները, առաջացնում են պալարիկներ, և դրանով թե բարձր բերք ենք ստանում և թե հողը հարստացնում ենք ազոտով:

Միության սահմաններում այս ուղղությամբ կատարված փորձերը տվել են փայլուն արդյունքներ: Մեզ մոտ՝ Հոկտեմբերյան շրջանում անցյալ տարի այդ փորձերը դրվել են: Այս տարի այդ աշխատանքներն ավելի ծագարիկելու յեն, վորոնք մեծ արժեք են ներկայացնում մի շարք շրջանների համար, վորոնց հողերն աղքատ են, կամ զուրկ են այդ բակտերիաներից և վորի շնորհիվ այդ հողերում թիթեռնածաղկավորների, ընտանիքին պատկանող բույսերը բարձր բերք չեն տալիս:

Հ. Փանոսյան

ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ԳԾՈՎ ԻՆՉ ԳՐՔԵՐ ԿԱՐԴԱԼ

Յե. Մովսիսյան.— «Գոմաղը» 1935 թ.

Պրոֆ. Քալանթարյանի խմբագրությամբ լույս տեսավ ընկալութեամբ: Այս գրքույկում պարզ մատչելի լեզով բացատրվում ե գոմաղը պահպանման ու գործադրման տեխնիկայի մասին: Խոսվում ե նաև կույտի մեջ և հողում գոմաղը կրած փոփոխությունների մասին: Գոմաղը լավ պահելու և ճիշտ գործադրելու համար այս գրքույկը պետք ե կարդալ:

» «Բամբակենու պարարտացումը» 1934 թ.

» Опыты по применению цианамида —
кальция в ССР Армении, 1932 г.

Գ. Գավրիլյան.— «Հանքային պարարտացում» 1930 թ.

» «Կալցիում-ցիանամիդ» 1932 թ.

» «Հողի քիմիական պարարտացում» 1932 թ.

» «Ծխախոտի մշակույթի պարարտացման հիմունքները» 1934 թ.

Շ. Ալեքսանյան.— «Հանքային պարարտանյութերով պարարտացնելու տեխնիկան» 1934 թ.

Ա. Արեվուածյան.— «Հանքային պարարտանյութերի փորձերի Արդյունքները Խորհրդային Հայաստանում» 1931 թ.

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

1. Հարց—Վերքան քուսպ պետք և տալ մեկ հեկտար հողին:
Պատախան—Բամբակի դաշտերի մեկ հեկտարին պետք և տալ
0,9—1,4 տոնն քուսպ:
2. Հարց—Քուսպը յեթք և ինչպես պետք և հողին տալ:
Պատախան—Վարից և կրկնավարից առաջ հողի յերեսին հավասարաչափ շաղ տալ Քուսպի հետ պետք և տալ նաև
մոտ 300 կիլոգրամ սուպերֆոսֆատ:
3. Հարց—Բանի տոկոս ազոտ կա քուսպի մեջ:
Պատախան—Տարբեր տեսակ քուսպերի մեջ ազոտի տոկոսը տարբեր է: Ներկայումս ստացված քուսպի մեջ ազոտը մոտավորապես 6,5 տոկոս է:
4. Հարց—Ֆոսֆորն ի՞նչ նշանակություն ունի բույսերի զարգացման համար:
- Պատախան—Ֆոսֆորը բույսերի անհրաժեշտ սննդանյութերից մեկն է: Ֆոսֆորը բույսերի սպիտակուցային նյութերի կազմի մեջ և մանում: Ֆոսֆորն արագացնում է բույսերի զարգացումը, մանավանդ ծաղկումն ու պտղակալումը, և դրանով կարձացնում է վեգետացիոն շրջանը:
- Ազոտով հարուստ հողերում յեթե ֆոսֆորի քանակը պակաս է, բույսերի ծաղկումը և հասունացումն ուշանում է:
5. Հարց—Կարելի՞ յև մեր դաշտերը միայն ֆոսֆորային պարատանյութերով պարարտացնել:
- Պատախան—Խ. Հայաստանի բամբակացան շրջաններում մեր կայանի կատարած փորձերը ցույց են տալիս, վոր բամբակի դաշտերում ֆոսֆորը մեծ արդյունք և տալիս, յեթե նա ազոտի հետ միասին և տրվում հողին, իսկ առանց ազոտի, մեր բամբակացան շրջանների հողերում ֆոսֆորը մեծ արդյունք չի տալիս, ուստի այդտեղ ֆոսֆորը պետք և ազոտի հետ տալ, բացի զինա հողերից, վորտեղ պետք և տալ միայն ֆոսֆոր (60 կգ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1. Խորհրդային կիրազութը	3
2. Տնտեսության թափուկներն ոգտագործենք պարարտացման համար	5
3. Մի կարեոր խնդիր՝ բամբակենու դաշտերի բերքատվությունը բարձրացնելու ասպարիզում	7
4. Քիմիացման և ագրոհողագիտության գիտահետազոտական կայանի փորձերից	10
5. Պարարտանյութերից խառնուրդ պատրաստելու կանոնը	12
6. Պարարտացման աշխատանքների մեքենայացումը	13
7. Ինչպես պետք և պարարտանյութերը մատնել հողի մեջ	15
8. Կատարենք պարարտացման պարզ փորձեր	17
9. Պարարտանյութերի վորակական վորոշումը	18
10. Ի՞նչ և ազոտը	24
11. Ազոտաբակտերը և բերքի բարձրացումը	25
12. Ի՞նչ և նիտրոգենը	27
13. Պարարտացման գծով ի՞նչ գրքեր կարդալ	29
14. Հարց ու պատասխան	30

Խմբագր. Կալեգիա՝

Գ. ԴԱՎԹՅԱՆ,

Ա. ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ



ՍՐԲաԿՐիչ՝ Գար. Հակոբյան

Գլավլիսի լիտեգոր № 9—98
Հրատ. № 216, պատվեր № 296, տիրաժ 1500,

Հանձնվել ե արտադրության 1935 թվի ապրիլի 1-ին

Ստորագրված ե տպագրելու 1935 թվի ապրիլի 23-ին

Գյուղհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0287482

17. 390

30 члт.



НКЗ—ССРА

Научно—исследовательская станция
ХИМИЗАЦИИ И АГРОПОЧВОВЕДЕНИЯ

КОЛХОЗНИК ХИМИЗАТОР

Вып. № 2

Сельхозгиз

1935

Эривань